


**1.2.6. Մանրածախ առևտուր, այլ ծառայություններ
(սպառողական շուկա)**

ՀՀ սպառողական շուկա (մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը)

	2002թ. հունվար-հոկտեմբեր		% ընդհանուրի նկատմամբ	
	փաստացի ծավալը, մլն. դրամ	2001թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ, %	2002թ. հունվար – հոկտեմբեր	2001թ. հունվար-հոկտեմբեր
Մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը, ընդամենը	588416.4	113.3	100.0	100.0
<i>այդ թվում</i>				
մանրածախ ապրանքաշրջանառություն	439777.9	114.8	74.7	73.8
բնակչությանը մատուցված ծառայություններ	148638.5	109.3	25.3	26.2

ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալների տեսակարար կշիռները
(% ընդհանուրի նկատմամբ)



2002թ. հունվար-հոկտեմբերին գրանցվել է սպառողական շուկայի ծավալի աճ 2001թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ (համադրելի գներով 13.3%) և դրանում 0.9 տոկոսային կետով ավելացել է մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշիռն ու համամասնորեն նվազել բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալի տեսակարար կշիռը: 2002թ. հոկտեմբերին սպառողական շուկայի ծավալը սեպտեմբերի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմել է 101.1 %:

Մանրածախ առևտուր

2002թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 439.8 մլրդ. դրամ, որը 2001թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, կազմել է 114.8% (2002թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատությամբ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը, համադրելի գներով, կազմել է 103.4%) :


1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը 2002թ. հունվար-հոկտեմբերին

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	Ապրանքաշրջանառության տեսակարար կշիռը ընդհանուրի նկատմամբ, %
Ընդամենը	439777.9	100.0
այդ թվում		
խանութներ	226223.6	51.4
հանրային սննդի կազմակերպություններ	4719.5	1.1
սպառողական ապրանքների շուկաներ	128232.7	29.2
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	19834.9	4.5
կրպակներ	60767.2	13.8

Մանրածախ ապրանքաշրջանառության կառուցվածքն ըստ ձևավորման աղբյուրների, 2002թ. հունվար-հոկտեմբերին

(%-ով ընդհանուրի նկատմամբ)



2002թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ է ունեցել խանութներում, սպառողական ապրանքների շուկաներում և կրպակներում իրականացվող առևտուրը՝ 94.4% (415223.5 մլն. դրամ), իսկ 5.6%՝ (24554.4 մլն. դրամ) բաժին է ընկել հանրային սննդի կազմակերպություններում և գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում իրականացվող առևտրին:

ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում առանձնակի տեղ ունեն սպառողական ապրանքների շուկաները: Հաշվառված սպառողական ապրանքների շուկաներից ստացված հաշվետվությունների տվյալներով և փորձագիտական լրահաշվարկի հիման վրա, 2002թ. հունվար-հոկտեմբերին ապրանքաշրջանառության ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 128232.7 մլն. դրամ:

ՀՀ սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ծավալների վերաբերյալ տվյալներն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի 2002թ. հունվար-հոկտեմբերին

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	այդ թվում՝ %-ով ընդհանուրի նկատմամբ	
		պարենային ապրանքներ	ոչ պարենային ապրանքներ
Արագածոտն	332.3	-	100.0
Արարատ	675.0	18.0	82.0
Արմավիր	1551.6	34.9	65.1
Գեղարքունիք	1457.3	21.3	78.7
Լոռի	3294.4	52.4	47.6
Կոտայք	1748.7	23.0	77.0


1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	այդ թվում՝ %-ով ընդհանուրի նկատմամբ	
		պարենային ապրանքներ	ոչ պարենային ապրանքներ
Շիրակ	1112.6	0.4	99.6
Սյունիք	601.7	1.5	98.5
Վայոց ձոր	-	-	-
Տավուշ	1446.6	57.1	42.9
ք. Երևան	116012.5	12.3	87.7
Ընդամենը ՀՀ	128232.7	14.2	85.8

Հարկ է նշել, որ հանրապետությունում սպառողական ապրանքների գործող շուկաները մասնագիտացված են հիմնականում ոչ պարենային ապրանքների վաճառքով, որի տեսակարար կշիռը սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում, 2002թ. հունվար-հոկտեմբերին, կազմել է 85.8%:

ՀՀ սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը ըստ ք. Երևանի և մյուս մարզերի (ամփոփ)

(% ընդհանուրի նկատմամբ)



2002թ. հունվար-հոկտեմբերին 2001թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ հանրապետության սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ամբողջ ծավալում գրանցվել է ք.Երևանի շուկաների ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշռի աճ 3.8 տոկոսային կետով:

2002թ. նոյեմբերի 1-ի դրությամբ ապրանքային պաշարները մանրածախ առևտրի կազմակերպություններում կազմել են 31239.3 մլն. դրամ, իսկ ապահովվածությունը՝ 48 օր:

ՀՀ սպառողական շուկայում իրենց ուրույն տեղն ունեն գյուղատնտեսական արտադրանքի շուկաները: 2002թ. հունվար-հոկտեմբերին այդ շուկաներում իրականացվող առևտրին բաժին է ընկել ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալի 4.5%-ը կամ 19834.9¹ մլն. դրամը:

¹ Հանրապետությունում գործող գյուղատնտեսական արտադրանքի չկազմակերպած շուկաների ապրանքաշրջանառության ծավալները հաշվառված չեն:


Բնակչությանը մատուցված ծառայություններ

2002թ. հունվար-հոկտեմբերին հանրապետությունում, ըստ ծառայություններ մատուցող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև չհաշվառված դաշտի լրահաշվարկի, բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալն, ընթացիկ գներով, կազմել է 148.6 մլրդ.դրամ, որը 2001թ. հունվար-հոկտեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 9.3%-ով:

Կենցաղային ծառայությունների ծավալը կազմել է 1939.5 մլն. դրամ, որը 2001թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 17.5%-ով:

2002թ. հունվար-հոկտեմբերին 2001թ. հունվար-հոկտեմբերի համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 1.0% հավելաճ, որը հիմնականում պայմանավորված է օդային տրանսպորտի (4.0%), կենցաղային ծառայությունների (1.0%), փոստային և հեռահաղորդակցության (9.4%), կրթության (4.2%), մշակույթի (14.6%), զբոսաշրջության և էքսկուրսային (6.0%) ծառայությունների սակագների հավելաճով: Նվազել են բժշկական սպասարկման և առողջարանների ու հանգստյան տների ծառայությունների սակագները(համապատասխանաբար՝ 3.8 և 2.2%-ով):

Բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքը 2002թ. հունվար-հոկտեմբերին
(% ընդհանուրի նկատմամբ)



2002թ. հունվար-հոկտեմբերին բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքում գերակշռել են մարդատար տրանսպորտի և բնակարանային-կոմունալ տնտեսության ծառայությունները, համապատասխանաբար՝ 38.7 և 21.8%:

2002թ. հունվար-հոկտեմբերին խաղատներից հավաքագրված հաշվետվությունների տվյալներով, դրանց ծառայությունների ծավալը կազմել է 1277.4 մլն. դրամ կամ ծառայությունների ընդհանուր ծավալի 0.9%-ը, իսկ բնակչությանը մատուցված համակարգչային ծառայությունների ծավալը՝ 52.9 մլն.դրամ: